



Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мелікъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առնիքի օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է լ է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՐԱՆԻ

Շաբաթ, Հոկտեմբերի 20-ին,

ԱՆՆԱ ԵԳՐՈՎԱՆԱ ՄԵԼԻՔ-ԲԵԳԼԱՐԵԱՆԻ

Մանկան քառասունութական, Ջորաշէնի ս. Աստուածածին եկեղեցում (Միջին փողոց) կը
մատուցվի պատարագ եւ ապա կը կատարվի հոգեհանգիստ, որի մասին հանդուգնալի
որդիքը եւ զուտորը յայտնում են այն բոլոր անձանց, որոնք կը կամենան իրանց ներ-
կայութեամբ պատուել հանդուգնալի յիշատակը: Պատարագի սկիզբն է 10¹/₂ ժամին,
իսկ հոգեհանգիստինը—11¹/₂ ժամին:

1—1

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԻՑԻՆ

Գինեգործական հարցերի ըննութիւնը.—Ներ-
քին ՏԵՍՈՒԹԻՆ. Նամակ Բագուից. Նամակ
Հարաւորագործից. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Նա-
մակ Պարոնաւանից. Արտաքին լուրեր.—ՀԵ-
ՌԱԳԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆԻՆԵՐ.—ԲԱ-
ՆԱՍԻՐԱՅԱՆ. Գրական գէտեր:

ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԵԼԻՔ-ԲԵԳԼԱՐԵԱՆԻ

Ներկայումս Թիֆլիսում տեղի ունեցող
գինեգործական ժողովը գրաւում է բազ-
մաթիւ հետաքրքրիչ զեպի իր նիս-
տերը: Թէ գործնական գիւղատնտեսներ և
թէ մասնագէտներ ուշադրութեամբ ըննում
են ասպարէզ բերած հարցերը, աշխատե-
լով զայլ այնպիսի եղբայրացութիւնների,
որոնք կը նպաստեն տեղական գինեգործու-
թեան զարգացման:

Այդ գործունէութիւնը և գինեգործութիւնը
կոմիսսում կերակրում են հարկաւոր
գիւղերի բնակիչներին և կարող են մեծ
ծաւալով ընդարձակվել, եթէ միջոցներ
ձեռք առնվին մի կողմից մաքաւելու այն
ձախորդ հանգամանքների դէմ, որոնք վնաս-
ում են խաղողի վազերին, իսկ միւս կող-
մից կատարելագործելու գինեգործութեան
արհեստը և բանալու խաղողի և գինու
համար նորանոր, աւելի ընդարձակ և շա-
հաւէտ վաճառանոցներ:

Կոմիսսում ներկայումս խաղողի այգի-
ները բռնել են մօտ 130,000 դեկտարին

տարածութիւն, որից ստացվում է 11
միլիոն վեցրօ գինի, բացի գրանից օղի, մաթ
և ուտելու խաղող: Գինու ամենամեծ
մասը սպաւովում է երկրի մէջ և միայն մի
միլիոն վեցրօ արտահանվում է Կովկասի
սահմաններից ուրիշ տեղեր: Կովկասի սահ-
մաններում խաղողը և գինին տեղափոխ-
վում են մի տեղից միւս տեղ, որինակ
տափարակներից դէպի լեռները, ուր չը
կան խաղողի այգիներ:

Մեր երկրի խաղողին սարսափելի վնաս-
ներ հասցրին ֆիլօքսերան, օիդիումը, միլ-
դիումը, անտրակնոզ և ուրիշ հիւսնողու-
թիւնները. դրանց աւելացրէ և կար-
կուտը, որ վերջին տարիները շատ զգալի
հարուածներ տուեց մեր այգեգործու-
թեան: Ներկայ ժողովը արդէն զբաղվեց
ամբիկական վազերի տարածման խնդրով
և ցանկալի համարեց, որքան կարելի է
եռանդուն կերպով նրան տարածել բոլոր
այն տեղերում, ուր բուն է դրել ֆիլօք-
սերան, կամ վտանգ կայ, որ այդ սարսա-
փելի միջատը շուտով մուտք կը գործէ:
Կարկուտի վնասները ոչնչացնելու նպա-
տակով այժմ փորձում են յատուկ թնդա-
նութիւնների միջոցով զրկել կարկուտը ամ-
պերը: Ներկայ ժողովը, բաւարար համա-
րելով Կովկասում, Ուկրէյն կարկուտը
այս տարվայ արած փորձերը, զբաղվեց այն
հարցով, թէ ինչ կազմակերպութիւն պէտք
է տալ թնդանութիւնի գնելու և նրանց բա-
նեցնելու գործին և եկու աշխատելու կա-
պութեան, որ դրա համար անհրաժեշտ է
կազմել գիւղատնտեսների յնկերակցու-
թիւններ, որոնք յանձն առնէին ընդհա-

նուր ոյժերով և միջոցներով թնդանութ-
ների համար պահանջվող ծախքերն անե-
լու և ամբողջ կազմակերպութիւնը զուլի
բերելու:

Անշուշտ պետութիւնն էլ իր կողմից
կարող է զանազան միջոցներով օգնութեան
գալ մեր այգեգործներին և գինեգործնե-
րին. բայց ցանկալի է, որ մեր գիւղա-
տնտեսները սովորէին իրանց ոյժերով և
միջոցներով իրագործել այն բոլորը, ինչ
որ կախած է նրանց ինքնուրոյն խելացի
վերաբերմունքից դէպի գործը: Պետական
զանձարանը ամեն ժամանակ մի և նոյն
գրութեան մէջ է լինում և անկարող է
ընդառաւ ձեռքով օգնել արդիւնագործողին:
Իսկ գործը չէ սկսում յետաձգումներ,
որովհետեւ այսպէս նա կարող է կորուստի
մատնվել: Այդ պատճառով ամեն ջանը
պէտք է անել սովորելու գործել ինք-
նուրոյն կերպով, սեփական աշխատան-
քով և կազմակերպութեամբ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԹՅՈՒՆ

Մարդ չէ կարող այժմ ուրիշ բան գրել Բագ-
ուից, բացի միայն անհրաժեշտ դրամական տագ-
նապից, որ ամեն բան կուլ է առել և չէ
թոյլ տալիս, որ մարդ ուրիշ բաներով զբաղվի:

Տագնապը իսկ որ սարսափելի է, անանկու-
թիւններ է սպառնում, բայց Բագուի նաւ-
թագիւնաբերական ֆիրմաների ներկայացու-
ցիչները, գերեւտօրները, կառավարիչներն էլ
այնքան անհեղ չեն, որ այդ տագնապից վա-
խենան: Նրանք կուտեն են, այն էլ մեծ ոյժով:
Ուսանք մտածում են ծառայողներին ուժեղացնել
200%-ով պակասացնել, ուսանք բանւորների մի
մասը արձակում են ամբողջովին՝ նրանց ուս-
նիկները չը վարած եւ խեղճերին օտարել են
օրը մի քանի անգամ ենթարկվել զանազան
ների կողմ ու կողմի յանդիմանութիւններին
մի քանի շաբաթ շարունակ իրանց Բագուն այլան-
դակութիւնների աշխարհ է. այս դրամական
տագնապի մէջ տները դարձեալ իրանց առա-
պելական թանգութիւնով են վարձու տրվում:

Նա սիրում է եռանդուն կերպով աշխատակցել
այն ժամանակվայ մեր երկու ամսագիրներին:
«Հիւսիսային» մէջ նա երեւան է գալիս Մի-
քայէլ Վայրլեան անունով եւ ապագրում է
նապօթիւն Մեծի ընդարձակ կենսագրութիւնը
և հառաքի Վախագրութեան վէպը, իսկ «Երեւանի»
մէջ նա Գալուստ-Գալուստ է իր տանաւորնե-
րով եւ Մ. Միսաիբեան է իբրեւ թարգմանիչ:
այդ կեղծ անունն ենք տեսնում նրա «Թաւա-
նագրութեան» (թարգմանութեան), «Պաշտպան
Արշալույս» (թարգմանութեան) թարգմանական
աշխատութիւնների տակ:

Հայոց գրականութեան պատմութեան մէջ
նկատված մի փաստ է, որ ուր հայերէն տպա-
րան է բացվում, այնտեղ ծաղկում է եւ գրա-
կան գործունէութիւնը: Պատկանեանի տպա-
րանը Պետերբուրգում մի փոքրիկ, բայց շատ
աշխույժ չրջան է բաց անում, որ հիւսիսային
մայրաքաղաքի հայ գաղութի պատմութեան
լուսաւոր էջերից մէկն է կազմում: Տպարանը
համարեա միայն Պատկանեան ընտանիքին է
ծառայում: Բանաստեղծի հայր տէր-Թաքիէլը
գրում է «Հայոց Պատմութիւն», երբեք միջնա-
դէպը հայոց պատմութիւնից—1) հայերի գե-
րիվարութիւնը Պարսկաստան Շահ-Աբասի ձեռ-
քով, 2) Ղրիմի գաղթականութիւնը եւ 3) Նիկոլ եւ
Լեւոնտանի հայերը: Այդ աշխատութիւնները,
որոնց վրա հեղինակի անունն տեղ չի գրված է
«Վերջը կիմանալ», գրված են բանաստեղծա-
կան աշխույժով եւ գեղեցիկ աշխարհաբարով:
Բացի դրանցից, տպագրվել են նոյն քառա-
նայի «Վարդան Մամիկոնեան», «Շաւարշ երկ-
րորդ», ինչպէս նաեւ ընդհանուր պատմու-

նունդը օրից օր թանգանում է: Կարծեք մինչեւ
այս իրանց անիւնների վրա թաւալում են, շամ-
պայի եւ բենեդիկտինի չիւրը միտ բաշխում
են եւ դրամական տագնապ է... կրկին է...

Ամառվայ երեք ամիսներին հասարակութիւ-
նը անհամբեր սպասում էր թատրոնի մասին
մի դրական լուր առնելու: Թիֆլիսից եւ Բա-
գուից յուսատու լուրեր էին հասնում «Մշակ»-ին
եւ մեր թատրոնական հասարակութիւնը մտա-
ծում էր, որ դրամական տագնապի ժամանակ,
երբ ամեն բան տակն ու վրա է լինում, Բագ-
ուում մի միսթարութիւն կունենան ձեռքը:
Բայց իրողը... Թիֆլիսը անպատրաստ էր այս
սեզոնին խուսը պահելու, իսկ Բագուում կրկին
էր, տագնապ, մարդիկ չէին կարող դէֆիցիտի
մասին մտածել: Չորս տարի շարունակ Բագ-
ուում ներկայացումներ են լինում հայերէն լեզ-
ւով, կազմվում է թատրոնական հասարակու-
թիւն, որի անդամներ թիւը հետզհետեւ աւե-
լանում է: Թատրոնը պահանջ է դառնում եւ
յանկարծ... նա այլ եւս չը կայ: Ինչու, ինչ
պատճառով: Ոչինչ չը գիտենք, ոչինչ չը կայ: Սե-
սպասում ենք: Սպասում ենք, որ մեր դերա-
սանները զան Բագու եւ մեր թատրոնական
լիազօրներին առիթ տան մի քանի ներկայա-
ցումներ տեսնելու: Ինչու այդ զոհողութիւնը
թողնել մեր դերասաններին: Որովհետեւ դրա-
մական տագնապ է... այնուամենայնիւ այդ
տագնապը չէ փոփոխել Բագուում կենցաղա-
րութեան եղանակը, այնուամենայնիւ կան մար-
դիկ, որոնք միայն ներկայացումներ մէջ են
փնտռում իրանց միսթարութիւնը... Սուվո-
րինը 75000 ռ. է վտանգում առաջին քաղցից հա-
սարակութեան համար եւ Բագուում կան մար-
դիկ, որ նրա ազգաբնութիւնը ծաղրում են—
մեզանում շատ քիչ բան պէտք է ազգասէր
դառնալու, մեր երախտիքը գրաւելու համար:
Միթէ այդ քիչ բանն էլ անելու անընդունակ
են մեր ազգասէրները...

Գր. Նիկիտին

ՆԱՄԱԿ ՀԱՐԱՍՈՒԹԱԶԱՐԻՑ

Սեպտեմբերի 27-ին

Տառնեակ տարիների ընթացքում տեղիս հայ
հասարակական ապարկչում պաշտօններ են
վարել զազմաթիւ անձնք իրեւ երէցփոխ
կամ իբրեւ դպրոցի եւ աղքատների հոգաբար-
թեան մի ձեռնարկ, որի վրա թարգմանողի
անունն եւ ազգանունն օկզնատաներն են
գրված—Օ. Պ. Միսթարով եւ, որ դա մեր
բանաստեղծի ամուսինն է—Օլգա Պատկանեան
*) որ իր թարգմանութիւններով աշխատակ-
ցում էր Պատկանեանների գրական ընտանի-
քին:

Ինքը, Ռաֆայէլը, իր տպարանում տպագ-
րեց Պետրոս Մեծի կենսագրութիւնը, որ ինքն
էր կազմել: Բայց այս բոլոր գրքերը երկրոր-
դական նշանակութիւն ունէին: Պատկանեանը
տպարան բացել էր աւելի լայն ու տեւական
գործի համար: 1863-ին նա սկսեց հրատարա-
կել «Հիւսիս» անունով շաբաթաթիւթը:

Մի բանաստեղծ կարող է լինել եւ լաւ խրմ-
բագիր: Մենք արդէն յիշգրիտ ենկրասովին,
որ բանաստեղծ լինելով, խմբագրում էր ուս-
տաց ամենանշանակաւոր ամսագիրներից մէկը:
Ինչպիսի խմբագիր կարող էր դառնալ մեր
Պատկանեանը: Մենք արդէն գիտենք, որ նա
լայն, առաջաւոր հասկացողութիւնների տէ-
րօքի էր. հետեւաբար պէտք էր սպասել, որ
նա պիտի աչքի ընկնող գեր կատարել մեր
հրապարակափոսութեան մէջ, Բաւական էր,
այն ժամանակների համար, որ նա մշակված
յօդաւանդներով արծաթէր այն մտքերը, որոնք
գրված են նրա «Ո՞վ է հայը», «Տեղը եկաւ»,
«Դեռ չի գրած» եւ այլ բանաստեղծութիւննե-
րի մէջ: Բայց կան մարդիկ, որոնք մի յայտնի
չըլանի մէջ կարող են օգեւորվել, աստուա-

*) Պատկանեանը ամուսնացաւ Պետերբուրգի հա-
մալարանի արարական լեզուի պրոֆէսոր Սիւրը-Ջարո
մեանի աղջկայ հետ 1864-ին:

ԲԱՆԱՍԻՐԱՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

VIII

1860-ին, աւարտելով Պետերբուրգի համալ-
սարանի արեւելեան լեզուների բաժինը, Ռա-
փայէլ Պատկանեանը, երեսնամեայ հասակում,
մտնում է կենտրոնի մէջ:

Այդ տեղափոխութիւնը—ուսանողական նրա-
տարանից դէպի կենտրոն—վտանգաւոր է եղել
շատ շատերի համար: Փանիսներն են էինց այդ-
տեղ, կենտրոն չէլու, գտել գերեզման ու
թաղվել այնտեղ. քանիսներն են համալսարանի
պատերի մէջ թողել իրանց երգերն ու մտքերը
եւ կորել են, անյայտացել աշխարհային հոգ-
եւերի ծոցում:

Մեր բանաստեղծի համար այդպիսի վտանգ
չը կար: Ուսանողական չըլանը նրա գրակա-
նական գործունէութեան չըլաններից մէկն էր,
առաջինը: Կենտրոնի մէջ մտնելը բաց է անում
այդ գործունէութեան երկրորդ չըլանը, որ
տեւում է մինչեւ 1877 անմահաւալի թաւակներ:
Այդ տարին օկված ուսու-թիւրքական պատե-
րազմը երրորդ եւ վերջին չըլանն է բաց
անում:

Մինչեւ կանքի վերջը Ռափայէլ Պատկանեան
գործում էր գրիչը ձեռքին: Նա երբեք զեն-
գանի մեռածներին թոււմ չէ եղել, երբեք չէ
զաղարկել գործնեւց: Ուսանող էր նա—եւ եր-

գում էր, գրում էր, հրատարակում էր: Վեր-
ջաւա ուսանողութիւնը—եւ նա չէ ընդհա-
տում այդ գործունէութիւնը, դէս ու դէն էլ
չէ ընկնում պաշտօններ գտնելու, իր գիւյտով
կարիերա ստեղծելու համար, այլ բնականութիւն
է հաստատում Պետերբուրգում, հիմնում է օե-
փական տպարան: Վճռել է շարունակել գրա-
կան աշխատութիւնները:

Այդ ժամանակները Գալուստ-Գալուստ անունը
արդէն շատ յայտնի էր ընթերցող հասարակու-
թեան մէջ: Բայց այլ եւս չը կար գրական այն
ընկերակցութիւնը, որից կազմվել էր այդ
անունը: Ընկերներից միայն Պատկանեանն էր
մնացել, որ շարունակեց հաւատարիմ մնալ ըն-
կերութեան ուխտին, գործում էր մենակ եւ
իր բանաստեղծութիւնների համար ընդմիտ
ընտրեց Գալուստ-Գալուստ անունը:

Սակայն բանաստեղծութիւնը, որ այնքան
աչքի ընկնող գիրք էր ստեղծել նրա համար եւ
դեռ պիտի ստեղծէր, չէ բաւականացնում նրան:
Իբրեւ մէկը այն սակաւաթիւ հայերից, որոնք
այդ ժամանակները ամեն ջանք գործ էին
դնում, որ ստեղծվի հայկական նոր գրականու-
թիւնը, Պատկանեանը գգում էր, որ իր եղի-
րունք երգերը բաւական չին, պէտք է ժող-
վրդին տալ եւ ուրիշ տեսակի մտաւոր կերա-
կուր: Նա վեհ պարնասական չէր, որ միայն
փայլուն յանգերի եւ հրեշտակային մեղեդիների
հետ գործ ունենար ու նրանցով էլ ապրէր:
Հասարակական գաղափարներով տոգորված
բանաստեղծը չէր կարող չը լինել հասարակու-
թեան մէջ, չը մասնակցել նրա գործին, չը ծա-
ռայել հասարակաց օգտին:

Ու հրաժարական չը տալով իր մտածանքին,

ձու, սակայն հրապարակական հաշուետվությունները բանը նրանց համար գոյություն չէ ունեցել: Շատերը նրանցից (ի հարկէ խօսքս բացառությունների մասին չէ) երկար տարիներ վարելով իրանց պաշտօնը՝ հետագայ են, առանց հասարակության հաշիւ ներկայացնելու, որի հետեւանքն եղել է կամ հասարակական գումարների կորուստը եւ կամ, գուցէ եւ անտեղի, հասարակության կառավարող վերաբերվելը արա կամ նրա ազնիւ պաշտօնավարութեանը: Վերջինիս հասարակական պաշտօնեաների մեծամասնութիւնը տնտես իշխանական է թողել հասարակութեան մէջ եւ ընդհանրապէս հրապարակական հաշուետվություններ չը լինելու պատճառով նրանց համարեա մեծամասնութեան ազնիւ կամ անազնիւ լինելը մինչեւ այժմ էլ հանելուկ է հասարակութեան համար: Ինչպէս շատ տեղ, նոյնպէս եւ այստեղ հասարակական հիմնարկութիւնները համարեա միշտ ազգայական դասակարգի ձեռքին են եղել, եւ թէ՛ պատահել է, որ երբեմն այդ հիմնարկութիւնները երիտասարդների ձեռքն են անցել, այնուամենայնիւ, սրանք եւս, հետեւելով իրանց նախորդներին, օրինակին, հաշուետվություններ մասին չեն էլ մտածել: Մեր առածները հաստատելու համար բերենք մի օրինակ:

Մի քանի տարի սրանից առաջ տեղիս հայոց գերեզմանատունը շատ թշուառ դրութիւն էր ներկայացնում:—չուրջը չը կար ցանկապատ, մահարձանները թողնված էին բախտի բերմունքին, եւ նրանց պահպանութեան համար պահպան չը լինելով, գերեզմանատան համարեա բոլոր արժէքաւոր մահարձանները կոտորուած կամ գողացվում էին: Գերեզմանատան այդ թշուառ դրութիւնը աչքի առաջ ունենալով, 7—8 տարի օրանից առաջ տեղիս ծխականները իրանց միջից ընտրեցին պ. Գ. Բալաքեանին, որը պէտք է խնամք տանէր գերեզմանատունը կարգի բերելուն: Եւ ճիշտ որ վերջինս իրականացրեց ծխականների յայտերը եւ այժմ իշխող գերեզմանատունը բոլորովին այլ պատկեր է ներկայացնում:—չուրջը չընկած է ցանկապատ, գերեզմանատան մէջ մշտապէս ապրում է պահպան, որի համար այնտեղ (թէեւ բաւական թանգ) բնակարան է չինված: Գերեզմանատան դատարկ գետնի վրա բանջարանոց եւ պարտեզ է անկված, որոնք իւրաքանչիւր տարի բաւական եկամուտ են բերում: Մի խօսքով պ. Բալաքեան գերեզմանատունը կարգի բերելու եւ նրա արդիւնքը աւելացնելու համար իր ջանքը չէ խնայել այն աստիճան, որ նոյն իսկ ճանապարհ չեն թողել հանգուցեալ անցկացնելու:

Վերջինիս ծախսերը ծածկելու համար պ. Բալաքեան ժողովարարութիւն է արել տեղիս հասարակութեան մէջ եւ պակասորդը (մի քանի հարիւր բոլորի) իր միջոցներից է լրացրել: Բայց անա 7—8 տարի է, ինչ պ. Բալաքեան իր ծախսած փողը յետ տեսնելու համար վերց-

նում է գերեզմանատան պարտեզից եւ բանջարանից ստացված եկամուտը եւ մի բնականորէն ստացված վարձը, որոնք բաւական խոշոր գումար են կազմում եւ հասարակութիւնը չը գիտէ, թէ որքան զուտ փող է մնացել պ. Բալաքեանի մօտ գերեզմանատան փողերից: Պ. Բալաքեան այս 7—8 տարիների ընթացքում չէ մտածել հասարակութեան հաշիւ ներկայացնելու՝ թէ որքան է ծախսված գերեզմանատան վրա, որքան եկամուտ է ստացվում եւ թէ որքան զուտ փող է մնացել իր մօտ եւ թէ հասարակութիւնը նրանից հաշիւ չը պահանջէ, գուցէ այդ դրութիւնը զեռյառ տարիներ շարունակվի:

Աւելի լաւ չէր լինի արդեօք, եթէ հասարակութիւնը պ. Բալաքեանից հաշիւ պահանջելով նրա մօտ եղած փողը եւ գերեզմանատան իւրաքանչիւր տարվայ եկամուտը յանձնէր տեղիս աղքատացի հոգաբարձութեան, որի կառավարում մի կօպէկ անգամ չը կայ եւ որը, չունենալով եկամուտի մշտական որ եւ է աղբիւր, անկարող է կարիքի համեմատ բաւարարութիւն տալ աղքատների դրութիւնը բարելոցելուն: Դրանով թէ պ. Բալաքեանը վերջ տուած կը լինէր հասարակութեան արդարացի տըրտունջներին եւ թէ աղքատացի հոգաբարձութիւնը կունենար եկամտի մշտական աղբիւր եւ միջոց կունենար աւելի լայն չափով կատարել իր վրա դրված պարտականութիւնը:

Յ. Արքահանան

ՆԱՄԱԿ ԽՐԱԿԱՆՈՒԹԱՆ

Թիֆլիս, հոկտեմբերի 17-ին
Նոանդոտ պ. Գ. Չալխուշեան կոչ է կարդում հայ ազգին, մի գեղեցիկ արձանագրարով էլ յարգելու անմոռանալի Միքայէլ Նալբանդեանի յիշիւր:

Այժմ, երբ ազգը այսպէս թէ այնպէս իր բարոյական պարտքը կատարել է զէպի Գաւառ-Քաթիպան, աւելի յարմար ժամանակ չէր գտնվի հրապարակում ընել Նալբանդեանի արձանագրարը: Մի քաջ անգամ չեմ տեսնում վրէժ յուսար, որ «Մեր հայրենիք» երգող համայն ազգը ջերմագին արձագանք կը տալ պ. Չալխուշեանի հրաւերին:

Այս տարի շատ անգամ եմ այցելել Սուրբ Խաչում ամփոփված այդ երկու իրար մօտ թաղված նուիրենի յիշիւրները, եւ ամեն անգամ, երբ տեսել եմ Նալբանդեանի գերեզմանի վրա իր հանգուցեալ զոռ ծախսով թէեւ ոչ անշուք գերեզմանաքարը, ինքս ինձ զարմացել եւ կշտամբել եմ Այո, նրա, այդ նուիրական անունը կրողի գերեզմանի վրա կանգնած պէտք է լինի ոչ թէ ազգային իսկ բարեկամի կամ մի հիմնարկութեան ծախսով, այլ համայն ազգի կօպէկներով կանգնեցրած մի փառաւոր արձան, որը ոչնչով պակաս չը լինէր Պատկանեանի արձանից:

Թոյլ եմ տալիս զիմի պ. Չալխուշեանին եւ խնդրել, որ այս անգամ էլ նա յանձն առնէ այդ զոռուր գործի նախաձեռնութիւնը:

Ալեքսանդր Աբելեան

Ճային կրակով բռնկվել: Պատկանեանը դուրս եկաւ իրան սահմանված չըլմանից եւ դարձաւ մի շատ թոյլ, աննկատելի խմբագիր: Նրա «Հիւսիս»-ը մեր մամուլի պատմութեան մէջ մի առանձին, աչքի ընկնող տեղ գրաւել չէ կարող: Դա թէեւ չարաթաթերթ էր, բայց աւելի նման էր չարաթերթ մի անգամ հրատարակող ամսագրի կամ, աւելի ճիշտ ասած, ժողովածուի, որի մէջ հրապարակութիւններ, այս բառի իսկական նշանակութեամբ, բացառկայում էր:

Ձէ կարելի առել, թէ այն ժամանակներում մենք միանգամայն զուրկ էինք այն ոյժերից, որոնք հարկաւոր են հասարակական մամուլ առաջ տանելու եւ զարգացնելու համար: Ստեփանոս Նալբանդեանը այս կողմից էլ անգնահատելի ծառայութիւններ էր մատուցել մեզ: Նա արդէն մտքով էր մեր մէջ գրական ուղղութիւնների հասկացողութիւնը, տուել էր իսկական հրապարակութիւն մի փայլուն նմուշ, որ հասարակական հարցեր էր զարթեցնում, ղեկավարում էր հասարակաց կարծիքը: Փնտաղատութիւնը, ֆելիէտները, բանակերը, մերկացնող, յարձակվող առաջադիմութիւնը—ամեն ինչ կար արդէն, թէեւ ոչ բաւականաչափ զարգացած ու բազմակողմանի. Ռափայէլ Պատկանեանը չը կարողացաւ իր խմբագրութեան մէջ հաւաքել այդպիսի ոյժեր: Եւ նրա չարաթաթերթը ոչ միայն նորութիւն չէր հայերի համար, այլ եւ յետ էր մնում նոյն իսկ ժամանակակից մի քանի պարբերական հրատարակ-

* Տարբարաբար, Թիֆլիսում մենք չը կարողացանք գտնել «Հիւսիս»-ը. բայց կարգացել ենք նրան շատ տարիներ առաջ, այնպէս որ խոսում ենք նրա մասին, ապակներով մեր լիջողութեանը:

կութիւններից:

Եւ զարմանալի էլ չէ. աշխատողներ շատ քիչ կային, թերթը կամ ամսագիրը պիտի լցնէր խմբագիրը: Բացի դրանից, մեծ անյարմարութիւն էր եւ այն, որ չարաթաթերթը հայկական կանանցից այնքան հեռու մի տեղ էր իւրաքանչիւրում: Եթէ այս հեռաւորութիւնը այնքան նկատելի ազդեցութիւն էր գործում ամսագրի վրա, որ արագ հաղորդակցութեան այնքան մեծ կարողութիւն չունի, որ կարող էր տպագրել եւ այնպիսի նիւթեր, որոնք անմիջական կապ չունեն օրվայ անց ու դարձի հետ, աւելի եւս նկատելի ու անբարեխաղ պիտի լինի մի չարաթաթերթի վերաբերմամբ, որ իր բնաւորութեամբ աւելի մօտ է կանգնած կեանքին, աւելի կապված է օրվայ չար ու բարիի հետ: «Հիւսիս»-ը, բնականաբար, պիտի լինէր մի «Բազմակողմ լրագիր», ինչպէս ինքն էր իւրան անուանում: Նա տպագրում էր տեղագրական, պատմական յօդուածներ, թարգմանութիւններ: Այդտեղ տպագրան Գաբրիէլ քահանայի վերոյիշեալ «Վարդան Մամիկոնեանը» եւ մի քանի օրերից հետեւեցին, որոնք յետոյ լոյս տեսան առանձին գրքերով:

Բայց պէտք է խոստովանել, որ Ռափայէլ Պատկանեանը ամեն ջանք գործ էր դնում իր չարաթաթերթի հետաքրքրական դարձնելու համար: Նա անդադար խելատում էր եւ այնքան նուիրվել էր իր թերթին, որ թողնէր իր քնարը, գրում էր յօդուածներ, թարգմանութիւններ էր անում: Ժողովրդի ծաշակին համապատասխանող նիւթ տալու ցանկութիւնը այն աստիճանին էր հասնում, որ «Հիւսիս»-ում տպագրվեց նոյն իսկ մի գլուխ «Հաղար» ու մէկ գլուխ «Երեւան»-ից—«Մովսէս Սինդրա»-ի եօթն մարերն քաղաքի երեւի: Կեանքի խաւար եւ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, հոկտեմբերի 20-ին, ի Տէր հանգուցեալ Ալեքսանդր III Կայսրի մահվան տարեդարձի օրը, Վրաստանի էկզարխի եկեղեցում եւ Թիֆլիսի բոլոր զորանոցներում տեղի կունենայ հոգեհանգիստ:

Երէկ Թիֆլիսի 2-րդ հաշտարար բաժանմունքում տեղի ունեցաւ կուսանաց վանքի եւ իշխան Էրիթթովի դատը այն հողաբաժնի վերաբերմամբ, որի վրա իրանց իրաւունքն էին յայտնում թէ կուսանաց վանքի վարչութիւնը եւ թէ իշխան Էրիթթով: Դատաւորը գործը վճռեց յօգուտ կուսանաց վանքի:

Ոսկէ, արծաթէ առարկաների եւ կաշուէ գործուածքների միջազգային ցուցահանդէսը կը բացվի Պետերբուրգում ղեկավարների 7-ին Ֆրանսիան պաշտօնապէս մասնակցելու է այդ ցուցահանդէսին:

Պ. Գեորգ Շահումեան ուղարկելով մեզ 35 բուլբի, խնդրում է այդ գումարով բժշկական-առողջապահական եւ ժողովրդական գրքեր ուղարկել Մեղրի գիւղի հասարակութեան, ժողովրդի մէջ ձրի տարածելու համար: Գումարը յանձնեցինք «Պուտոններեք» գրախանութիւն, պարտի ցանկութիւնը կատարելու համար:

Բնական գիտութիւնների կանգիդատ Պոգորա առաջարկում է Թիֆլիսի քաղաքային վարչութեան իր աշակցութիւնը էլէքտրո-տեխնիքական ուսումնարան բանալու համար Թիֆլիսում: Պ. Պոգորա երկար տարիներ ուսումնաւորել է էլէքտրո-տեխնիկական արտասահմանում եւ հիմնաւորապէս ծանօթ է այդ գործի հետ: Քաղաքային վարչութիւնը որոշեց Պոգորայի առաջարկութիւնը յանձնել ուսումնարանական մասնագիտովի եղբակացութեանը:

«Կարե» լրագրում կարդում ենք. «Այն համաթոսական որոշումների հիման վրա, որ կայացրել են դուխոբորների նախկին գիւղերում, Կիրիլովկայում, Սպասովկայում եւ Գորելովկայում,—բնակչութեւնը ուսումնական հասարակութիւնները եւ համայնայն կողմանեան քաղաքացիական մասի պ. կառավարչապետի շնորհակցութեան հրամանի 10-րդ կէտի, իշխան երեք գիւղերին, որոնք մինչեւ այժմ պահել էին իրանց աղանդաւորական անունները, կարող չըլինէին նախադասարկել կարգադրութեամբ տրված են նոր անուններ. Կիրիլովկա գիւղը այսուհետեւ պէտք է կոչվի Գոլիցինո, Սպասովկան—Օրկինցով, իսկ Գորելովկան—Պետրովկա»:

Նոյն լրագիրը հաղորդում է, թէ Կարեի եւ Արդանի շրջաններում դաշտային միջերը մեծ վնասներ են տուել արտերին: Արդահա-

մանապարհորդութիւնները վերնագրով:

Սակայն այսքան ջանքերը եւ գրանց հետ կապված գրաքանակ գործողութիւնները չօգնեցին «Հիւսիս»-ը, որ միտել էր հրատարակվել 1863-ի սեպտեմբերից, կարողացաւ շատ կարճ կեանք պահպանել: Հետեւեալ տարին նա արդէն դադարած էր: Եւ Ռափայէլ Պատկանեանը, այլ եւս աւելորդ համարելով Պետերբուրգում մնալը, ծախեց իր տպարանը, ընտանիքով տեղափոխվեց, 1866-ին, իր հայրենի քաղաք—Նոր-Նախիջևան:

Այստեղ նա թողեց գրական աշխատութիւններով ապրելու միջոցը: Նիւթական անպահանջութիւնը, որ մեր բանաստեղծի ամենասիրելի թշնամին հանդիսացաւ, մինչեւ նրա կեանքի վերջը, հարկադրեց նրան պարապմունք գտնել եւ նա ընտրեց մանկավարժական ապարէզը, ուր գործեց մինչեւ մահվան: Ժամը, Բայց հետաքրքրականը այդ գործունէութիւնը չէ: Իրրեւ մանկավարժ, Պատկանեանը մի առանձին, նշանակելի գործունէութիւն չէ ցոյց տուել մեր դպրոցական աշխարհում: Հետեւեց զարձակ նրա գրական գործունէութեան: Այստեղ մենք ներկայ ենք մի շատ հետաքրքրական հանգամանքի:

Բանաստեղծը այժմ ժողովրդի մէջ է, քաղաքի է: Եւ ժողովրդական կեանքը գրաւում է նրա ուշադրութիւնը, մտնում է նրան իր գրկի մէջ: Այդ ժամանակից Ռափայէլ Պատկանեանը երկու մասի է բաժանվում: Իրրեւ Գամառ-Քաթիպա, նա շարունակում է մնալ ազգային բանաստեղծ, այս անուան ամենաայն աստիճանին էր հասնում, որ «Հիւսիս»-ում տպագրվեց նոյն իսկ մի գլուխ «Հաղար» ու մէկ գլուխ «Երեւան»-ից—«Մովսէս Սինդրա»-ի եօթն մարերն քաղաքի երեւի: Կեանքի խաւար եւ

նր գաւառական գիւղերում վնասված են 499 ղեկավարի ցանկեր. իսկ Չարուշադի գաւառական Կոչիէյ գիւղում—մօտ 200 դեռեալներ:

Բաթումից հեռագրում են «Кавказ» լրագրին. «Հոկտեմբերի 17-ին, գիւղերով, օտար կանութիւնը ձերբակալեց աւազակ Տօվարդիլիւնին, որ մօտ ժամանակներումս կողոպտեց եւ վիրաւորեց երկաթուղու վագօնում արտաշէլի կուրսովին եւ սպանեց նրան ուղեկցող պահապանին: Յանցաւորը թաղնված էր Բաթումի գիւղերներից մէկում: Երբ ռադիկալութիւնը գնաց աւազակին ձերբակալելու, նա սկսեց փախչել Բաթումի փողոցներով եւ պաշտպանվել հալածողներից հրացանաձգութեամբ: Քաղաքից դուրս, Արդուինի խճուղու վրա, հալածողներին աջողկեց վիրաւորել նրան եւ ձերբակալել:

Մայրաքաղաքի լրագիրներ խօսքով, մտադրութիւն կայ փոփոխութիւններ մտնել քաղաքային չորս դասարանեան եւ տարրական դպրոցների պրօգրամների մէջ: Քաղաքային դպրոցների մէջ մտադրութիւն կայ մտնել նոր լեզուների դասաւանդութիւնը, աւելացնել զմագրութեան, նկարչութեան եւ բնագիտութեան դասերի թիւը: Ինչ վերաբերում է միւնիստրական տարրական դպրոցներին, զիլաւոր առարկաներից մէկը այնտեղ պէտք է լինի հայրենագիտութիւնը, կը մեծացնվի թուականութեան դասաւանդութեան պրօգրամը եւ կընդարձակվի կրօնի դասընթացը: Պրօգրամների մէջ փոփոխութիւններ մտնելու հարցը ընկնելու համար եկող տարի կը կազմվի առանձին խորհրդակցութիւն տարրական դպրոցների ղեկավարներից եւ տեսուչներից:

Մայրաքաղաքի լրագիրների ասելով, մտադրութիւն կայ առաջիկայ 1902 թուականին Պետերբուրգում կազմակերպել համաշխարհային օլիմպիական խաղեր:

Ալեքսանդրօպօլից հեռագրում են «Новое Обозрение» լրագրին, թէ այնտեղ քաղաքագլուխ նորից ընտրված է Գ. Տէր-Պետրոսեան 35 ձայների մեծամասնութեամբ 2-ի դէմ:

Մեղ խնդրում են տպագրել հետեւեալը. «Թիֆլիսի Մեախիի բանտի գրադարանը հայերէն գրքերով, լրագիրների (բացի «Մշակ» լրագիրից) եւ ամսագիրների կարօտութիւն ունի: Բարեբաղ անձանց ուշադրութիւնն եւ հրաւերում: Ցանկացողները թող բարեհաճեն իրանց նուէրները ուղարկել իշխող բանտի հասցեով եւ կամ ինձ հետեւեալ հասցեով. Армянскому священнику Тифлискихъ тюремныхъ церквей Григорию Матинянцъ»:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են. «Երկար անձրեւներից եւ անախորժ թաղութիւնից յետոյ,

փայլուն երեւոյթները նա դնում է գեղարուեստական պատկերների մէջ, որոնք սկսում են լոյս տեսնել 1869 թուականից եւ գնալով, բազմաթիւ են, մեծ քանակութիւն կազմում: Պատկանեանի այս բազմաթիւ գրուածքները, որոնց նիւթը զիլաւորապէս Նոր-Նախիջևանի կեանքն է, մեր գաւառային գրականութեան են պատկանում, որովհետեւ նրանք գրված են Նոր-Նախիջևանի տեղական բարձրագույն Պատկանեանը մի առանձին սէր ունէր զէպի իր մայրենի գաւառաբարձը, մի առանձին հատկութեամբ էր իւրացրել նրա բոլոր ներութիւնները եւ մի առանձին յամառութեամբ էլ գործ էր ածում նրան իր պատկերների եւ ոտանաւորների մէջ:

Ձնեք ուրանում, որ գաւառաբարձը, իրրեւ ժողովրդի գործածական լեզու, ունի առանձին չընաղ թարմութիւն, ձկունութիւն, հուժօր, որ հէնց այդ լեզուով կարելի է պատկերացնել ժողովրդի կեանքը, նրա նիւտ ու կացը, նրա ցաւերն ու վշտերը: Բայց որքան էլ լաւ ու անփոխարինելի լինի նա տեղացիների համար, կայ այն հանգամանքը, որ նրա գործածութիւնը մասնաւոր, տեղական կերպարանք է առիթ գրական երկերի նա չէ կարող ընտրելու մատչելի լինել ազգի ընդհանրութեանը, չէ կարող ամենքի համար ունենալ այն համեմատ հարկը, որ ունի իր տեղում:

Այդ գրականութեան մասին մենք յետոյ կը խօսենք: Այժմ շտապեմք տեսնել Գամառ-Քաթիպայի երկրորդ շրջանի բանաստեղծութիւնները:

(Չը շարունակվի)

գիտանքը, որի համար որոշեց մեծացնել բը-
ժիշկների թիւը, տալով նրանց բժշկական եւ
ախտահանական միջոցներ. հսկողութիւն նշա-
նակել Բաթումից երկաթուղով գնացողների
վրա. տալ տեղական բժիշկներին Երեւանի շի-
նոկի եւ Խաֆկինի լիմֆայի պաշարը եւ բանալ
Բաթումում սանիտարական-կատարող յանձնա-
ժողովի գործողութիւնները, սրպէս զի վեր-
ջինս ձեռք առնէ բոլոր անհրաժեշտ նախա-
պաշարանքական միջոցները:

Նիժնի-Նովո-Ռոսի. Դուռնի վճարը սոնա-
կան հանգստութիւն սահմանել գործակատար-
ների եւ արդիւնաբերական եւ առեւտրական
հիմնարկութիւններում ծառայողների համար:
Տօներին այդ հիմնարկութիւնները բոլորովին
փակված կը լինեն: Այդ որոշումը չէ վերաբը-
րում սոնավաճառի ժամանակին:

ՏՈՒԼՈՆ. «Gaulois» եւ «Charlemagne» գրա-
հակները, «Rothau» եւ «Chanz» գրահակա-
րին կրէյտերները եւ երեք ոչ այնքան խոշոր
նաւեր անշտապեցին միջերկրական նաւատոր-
մից եւ ճանապարհ ընկան դէպի արեւելք: Կա-
տարեալ լուծութիւն է պահպանվում այն մասին,
թէ ուր են կանգնելու նրանք:

Պէհլին. Մեծաւ արտաքին գործերի մինիստ-
րութեան փոխ-նախագահ Խարիզ-Պէնզ. Լի-
խունցաւոր ծանր կերպով հիւանդացաւ: Պրինց
Կինգ գնաց Կալֆէնգ Բողդիւսանի հետ տեսակ-
ցելու համար:

ՏՈՒԼՈՆ. Նաւատորմը իր լրիւ կազմով վե-
րադարձաւ երկկոյնեան Բոլոր նաւերը խարիսխ
գցեցին համապատասխան կէտերում:

Վիէննա. Առաւօտեան 7 ժամ 30 րոպէին
Ֆրանց-Յովսէփ կայսրը ժամանեց «Օտէլ Բրիտ-
տոր», ուր արդէն եկած էր հրաժեշտի համար
էրցհէրցոզ Եօսէփ: Նորին Մեծութեանը մուտ-
քի մօտ ընդունեց Մեծ Իշխան Միխայիլ Նի-
կոլաեւիչ եւ հրաւիրեց դէպի ներսի սենեակ-
ները, ուր եւ մնաց կէս ժամ: 7 ժամ 45 րո-
պէին գնացին կայսրանը, ուր Ֆրանց-Յովսէփ
կայսրը եւ Մեծ Իշխանը շատ արտաքին հրա-
ժեշտ տուեցին՝ գրկելով եւ երեք անգամ համ-
բուրելով միմեանց: Ժամը 8-ին Մեծ Իշխանը
ճանապարհ ընկաւ Վիէննա սպիտայի հետ:

Կիւն. Բացվեց նամակների գործութիւնը
փողոցների պատերի վրա կպցրած պօստային
արկղերից: Չարագործները արկղի բերանում
գնում էին առանձին կերպով յարմարեցրած
քաակ: Երբ գործութիւնն իմացվեց, պօստային
գրասենեակատեր պօստային չորս պաշտօնեա-
ներ կանգնեցին արկղի մօտ հսկելու համար:
Երեկոյեան մօտ 10 ժամին, մինչեւ ուստիկա-
նութեան դալը, պօստային պաշտօնեաները տե-
սան երկու երկասարգներին, որոնք մօտե-
ցան արկղին. նրանցից մէկը հանեց քաակը,
այն ժամանակ պաշտօնեաները յարձակվեցին
չարագործի վրա եւ բռնեցին նրան յանցանքի
տեղում: Միւսը փախաւ: Չերբակալվածը օֆի-
ցերի որդի է Պօպով ազգանունով: Փախածը
գժադրող Պանտալէն է. նա նոյնպէս կալա-
նաւորվեց ընակարանում, ուր գտան մօտ 600
նամակներ: Նպատակը—մարկանների գողու-
թիւնն է:

ԼՕՆԴՈՆ. Բժշկական շարաքաղաքի յայտա-
բարում է, որ Թագաւորի առողջական գրու-
թեան մասին լուրերը կատարելապէս անհիմն են:
Թագաւորը շատ առողջ է եւ ոչ մի օպէրա-
ցիային չէ ենթարկվել:

Բեռլին. Կեօնիգսբերգեան ծովային ջրանց-
քը նոյեմբերի 1-ից բացված է նաւերի ազատ
երթելակութեան համար: Պաշտօնական բա-
ցումը տեղի կունենայ նոյեմբերի 15-ին:

Բեռլին. Հաադայում այսօր տեղի ունէր եր-
կարատեւ խորհրդակցութիւն՝ բօէրների պատ-
գամաւորներ Լէյդսի եւ Վան-Բէյտենի միջեւ:
ԿԱԶԱՆ. Աւարտվեցին քննութիւնները բը-
ժշկական քննիչ յանձնաժողովում: Խնդիրներ
տուեցին 109 մարդ, նրանցից օտար համալ-
սարանների 25 բժիշկներ. քննութիւնը ավարտ-
վեց բռնեցին 45 գերազանց, 47-ը բժշկի
կոչումով եւ կին-բժիշկներ 16 հոգի. քննու-
թիւնները դադարեցրեց մէկը հիւանդութեան
պատճառով:

Եմբագիր ԱԼԷԳՍԱՆԴԵՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ ԹԱՅՈՒՆԻ ՏԻՖԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՍԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԴԵՊԻ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇԻՆ»
գրքի տպագրութիւնը վերջանում է: Պատ-
րաստվում են կրիչներ
2—3 Արշակ Կայունի

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ԻՔ. Ա. ԲՈՒԴՈՂԱՆԻ

Ով է յանցաւորը 15 Կ.
Առողջ հոգին առողջ մարմ-
նի մէջ 10 »
Կարիք եւ բարեգործութիւն . . . 15 »
Գեղձախտ (զօլօտոսիս) 10 »
Մանկավարժական համա-
նօտ գրոյցներ 15 »
Ժառանգութիւն եւ դաս-
տիարակութիւն 15 »
Լոյս տեսած վերեւ յիշված վեց գրքերի վա-
ճառումից գոյացած արդիւնքը ամբողջովին
յատկացնում է ապագային Ախալցխայում
հիմնվելիք աշխատանքի օգտին:
Դիմել Թիֆլիս. Կնիշնի մագազին «Գու-
տենբերգ», Դ. Գալստյան, Լորիս-Մելիկո-
ւսյան, № 11. 1—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՆՆԻՃՈՒՄ

Կիրակի, հոկտեմբերի 21-ին
Հայ դերասնական դրամատիկ ընկերութիւնը
մասնակցութեամբ տ. ՍԻՐԱՆՈՅԻ
կը ներկայացնէ
ԱՆՄԵՂ ՄԵՂԱՌՈՐՆԵՐ
Կոչվում 3 արար., հեղ. Օստրովսկու, Թարգ.
Գ. Առտեմանի
վերջը
Բ Ն Ա Կ Ա Ն Կ Օ Մ Ի Կ
Հանաք 1 արար. հեղ. Շիլլեր, Թարգ. Գ.
Աւետեանի
Սկիզբն է ժամը 8-ին 1—2

Կիրակի, հոկտեմբերի 21-ին
ՏՈՒՑԱՆԻՆԻՍ ԹԱՏՐՈՆՈՒՄ
Հանրամատչելի ժողովրդական ցերեկայ

ԿՕՆՑԵՐՏ

Խ. Մ. ԿԱՐԱՄՈՒՐՉԱՅԻ

Մասնակցութեամբ ցուցահանդէսի հայկական
խմբի, բաղկացած 60 հոգուց:
Տեղերի գները 10 Կ., 30 Կ., 50 Կ. օթեակ 1 Դ.
Տոմսակները վաճառվում են Թատրոնի կա-
տարում մինչ օր, առաւօտեան 10 ժամից մին-
չեւ երեկոյեան 6 ժամը:
Սկիզբը 1 ժամին, վերջը—3 ժամին:
2—3

ԵՐԿՐԱԶԱՓ-ԻՆՏԵՆԵՐ Ս. ԲԱ. ՀԱ. ԹՐԵԱՆ

Ընդունում է երկրաչափական եւ հարթաչա-
փական (ПЯВОЛИНОВЫЕ) եւ այլ տեսակի գե-
ղէկական աշխատութիւններ՝ ջուր մասալա-
րարելու, կանաչիզագիայի, ռուզման, ճահիճ-
ներ ցանաւադնելու, անտառների բարեկար-
գութեան, լեռնային գործի, ճանապարհների
եւ փողոցների շինութեան եւ կանոնաւորու-
թեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածք-
ների կարգաւորութեան յատկապէս վրա գը-
նահատական (ОПЕЧАТНЫЙ СБОР) տուրքի հա-
մար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը,
քաղաքային յատկապէս հաստատելը օրէն-
դական կարգով եւ այլն:
ԲԱԳՈՒ, «Դիօրցովայա Նովոբեր» հիւրանոց.
կամ Թիֆլիս Ավճառան փողոց, Շահրուզա-
դեանի տուն, № 59, բալկոն:
15—100

ՅՈՎԱԿԻՄ ՄԱՆՈՒՄԵՆՏԻ ԲԱՂԴԱՂԻ ԹԵՐԱՍԻ ՍԵՐՍ ՊԱՏՐԱՍԱՆՔ ՊԱՏՏԵՐԻ ՍԻՍԵՄՈՎ

Целлюлярная грена, приготовленная посис-
тем Пастера.
Կարելի է գիմել Թիֆլիս, Լորիս-Մելի-
կովսկայա լ. ճ. № 11. Գալստյ Գալստյանց.
կամ Черезъ Ордубаты, село Мегры, Іоанниму
Мадумянцу. (2) 13—15

Յայտնում եմ ի գիտութիւն հասարակութեան,
որ Դիօրցովայա փողոցի վրա, պալատական
այգուն կից գտնվող

Վ Ի Կ Տ Օ Ր Ի Ա

Նօմերները վերանորոգված, նոր կահաւորված
եւ ամեն կերպ յարմարեցրած են իջեւանողնե-
րի համար:
2—10 Օհան Բեանդարեան



ՊԱՀԱՆՔԵՑԵՔ ԱՄԵՆ ՏԵՂ Ի Ս Ս Ս Ս Ս

«ՈՒՐՈՐԻՆ» Մ. Վ. ԼԵՐԵՆԻՎԻ
դեղը օգնեցնում է կատարելապէս մի
քանի օրում հնացած կոշտերը (մազօղնե-
ր) եւ կունգները արմատով, միայն կա-
տարութեան հաստատած էտիկէտով №
22473.
Ծախվում է Թիֆլիսում, Դեղատան
Ապրանքների Առեւտրի Կովկասեան Ըն-
կերութեան մէջ եւ Բազուի եւ Բաթումի
բաժանմունքներում:
10—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Լեռն Կարապետեան

Դարմանում է առամներ, շինում է պլոմբեր,
սկէ պատկեր արմատների վրա նստացնելու
եւ կեղծ առամներ սկէ եւ կառուցել պատ-
տիկանների վրա:
Ընդունում է հիւանդներ ժամը 9-ից առա-
ւօտեան մինչեւ ժամը 7 երեկոյեան:
Սօլովակայա փողոցի վրա:
4—30

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ-ԿԻՆ Ս. Ա. ԲԱՐԳ

Ընդունում է առամներ եւ բերանի հիւանդու-
թիւն ունեցողներին, շինում է արհեստական ա-
ռամներ, հանում է առամները, պլոմբում է եւ
այլն: Ընդունելութիւնը 8-ից մինչեւ 2 ժամ առա-
ւօտեան եւ 4-ից մինչեւ 7 ժամը երեկոյեան:
Պուշկինեան փողոց, № 21, տուն Կուկուշա-
նովի:
4—15

Հայ սեմինարիա աւարտած մի երիտասարդ
ցանկանում է ուսուցչական ինստիտուտից
ցէնդ ստանալ, բայց պատրաստվելու համար
կարօտ է դրամական օժանդակութեան, ուստի
խնդրում է բարերար անձանց ուշք դարձնել
իր խնդրին: Համաձայնում է ընտանիքներում
հայերէնի դասեր վերցնել, հակառակ դէպքում
նպաստաւոր պայմաններով գործակատարու-
թիւն յանձն առնել:
Դիմել Մոզնու ս. Գէորգ եկեղեցու միաբան
Վարդան քահանայ Տէր-Ղեւոնդեանցին: 3—8

1901 թւի սեպտեմբերի 23-ին չը կայացած
ժողովի փոխարէն, երկրորդ անգամ խոնար-
հաբար խնդրում եմ Թիֆլիսի Կաթողիկէ
(Մէլլանի ս. Գէորգ) եկեղեցու բարեպաշտ
ծխականներին շնորհ բերել յիշեալ եկեղեցին,
այս հոկտեմբերի 21-ին, կիրակի, առաւօտեան
11 ժամին, նոյն եկեղեցու ներքին վերանորո-
գութեան մասին խորհրդակցելու:
Նրէցփոխ Գրիգոր Բահանդուրեան

Կ օ լ Ֆ է տ ի եւ Շ օ կ օ շ ա դ ի
գ ո թ ա ր ա ն
„Փ. Ն. ՓՐԻԴՈՆԵԱՆ“
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Առաջարկում է թարմ կարամէլ մրգե-
ղէնից, մօնպանսէ, մարմէլադ, պաստիլա,
զէֆիր եւ այլն:
Պատուէրներով դիմել գործարան. Պալ-
լովկայա փողոց, սեփական տուն, տէլէ-
ֆօն № 362.
Սեփական գործարանական խանութը
գտնվում է Մէլլանում, եղբ. Հէյդուբանների
տանը, տէլէֆօն № 772.
Մեր ապրանքները ծախվում են բոլոր
կոլօնիական խանութներում:
Բազուի եւ Բազուի գաւառի համար
ներկայացուցիչ է Նիկ. Սամարեանց, Մի-
քայելեան փող., տ. Աշումեանի:
68—100

Բժիշկների եւ կրկնատների բազմաթիւ փորձերը

Ս Օ Մ Ա Տ Օ Ջ Ա Ն

Ա Մ Ե Ն Ա Ն Ա Ն Ս Ն Ն Դ Ա Ր Ա Ր Ե Ի Կ Ա Ջ Դ Ո Ւ Ի Ի Զ Մ Ի Զ Ո Յ Ն Է
արինապակասութեան, թուլութեան, ջղային հիւանդութիւնների եւ առհասարակ բոլոր տե-
սակ ուժասպառ անող հիւանդութիւնների դէմ: ԾԱԽՎՈՒՄ Է ԲՈՂՈՐ ԴԵՂԱՏՆԵ-
ՐՈՒՄ ԵՒ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ: Սօմառօպի ներգործութեան
նկարագրութիւնը եւ բազմաթիւ բժիշկների յայտնած կարծիքները նրա մասին, առաջին պա-
հանջով, ձրիաբար ուղարկում է

ՖՐԻԴ. ԲԱՅԵՐ եւ ԸՆԿ.
Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Տ Ո Ւ Ն Ը
(Москва, Старая площадь, домъ Армантъ. Фрид. Байеръ и К°.)
(03, 31 օգ. 5, 15, 25 սեպ. 3, 13, 23, հոկտ. 2, 12, 22 նոյ. 4, 14, 24 դեկ.) 4—14

